# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 սեպտեմբերի 2023թ. N 300-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՃՈՒՐԴ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Ջերմուկ համայնքում աճուրդների անցկացման կանոնակարգի 7-րդ կետով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից ներկայացված Ջերմուկ քաղաքի 10-002-0031-0244 (հասցեն՝ ք. Ջերմուկ, Մ. Ստեփանյան փողոցի N 15/1), 10-002-0458-0038 (հասցեն՝ ք. Ջերմուկ, Երևանյան խճուղու N 41), 10-016-0216-0118 (գ. Գնդեվազ) և 10-016-0208-0034 (գ. Գնդեվազ) կադաստրային ծածկագրերով հողամասերն օտարելու նպատակով հայտարարել աճուրդ. աճուրդի օր նշանակել սույն թվականի հոկտեմբերի 31-ը:

2. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման մրցութային հանձնաժողովի կողմից ներկայացված՝ Գնդեվազ գյուղում գտնվող 10-016-0214-0119, 10-016-0201-0132 և 10-016-0201-01 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերը (հողատեսքը՝ արոտավայր) վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու նպատակով հայտարարել մրցույթ. մրցույթի օր նշանակել սույն թվականի հոկտեմբերի 31-ը:

3. Հաստատել աճուրդի և մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. սեպտեմբերի 29
Ջերմուկ

*Հավելված*
*Ջերմուկ համայնքի ղեկավարի*
*2023 թվականի սեպտեմբերի 29-ի N 300-Ա որոշման*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովը հայտարարում է հետևյալ հողամասերի դասական աճուրդով վաճառքի մասին

Լոտ N 1- գյուղատնտեսական գործունեության համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0216-0118, մակերեսը՝ 0,17106 հա, մեկնարկային գինը՝ 50 000 դրամ:

Լոտ N 2- գյուղատնտեսական գործունեության համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, կադաստրային ծածկագիրը՝ 10-016- 0208-0034, մակերեսը՝ 2,12862 հա, մեկնարկային գինը՝ 734 500 դրամ:

Լոտ N 3- հասարակական կառուցապատման համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մ. Ստեփանյան փողոց N 15/1, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0031-0244, մակերեսը՝ 0,0024 հա, մեկնարկային գինը՝ 100 000 դրամ:

Լոտ N 4- գյուղատնտեսական արտադրական օբյեկտի կառուցապատման համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 41, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0458-0038, մակերեսը՝ 0,32353 հա, մեկնարկային գինը՝ 6 110 000 դրամ:

Նշված հողամասերում չկան ճանապարհներ, ջրատար, գազատար, կոյուղու խողովակաշարեր և էլեկտրահաղորդման գծեր, սերվիտուտներ, այլ սահմանափակումներ: Աճուրդի մասնակցության վճարը լոտ N 1-ի և լոտ N 2-ի դեպքում՝ 10000 դրամ է, լոտ N 3-ի և լոտ N 4-ի դեպքում՝ 20 000 դրամ, որը անկախ աճուրդի արդյունքներից՝ ետ չի վերադարձվում: Նախավճարի չափը՝ մեկնարկային գնի 50%-ը, որը աճուրդի մասնակիցները մուծում են աճուրդի անցկացման օրը: Աճուրդի դրված հողամասերի աճուրդի քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով: Ցանկացողները ներկայացնում են հայտ՝ կցելով անձնագրի պատճեն (եթե ֆիզիկական անձ է) կամ հիմնադիր փաստաթղթերը (եթե ընկերություն է) և մասնակցության վճարի անդորագիրը: Աճուրդի կանոնակարգին, պայմանագրերի նախագծերին և ճարտարապետահատակագծային առաջադրանքներին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմաններին ծանոթանալու համար կարելի է զանգահարել 028721217 կամ 060747077 հեռախոսահամարներով: Հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ով կառաջարկի առավելագույն գին: Աճուրդում հաղթող ճանաչված անձը պարտավոր է 10 օրվա ընթացքում վճարել առաջարկած ողջ գումարը և կնքել առուվաճառքի պայմանագիր: Աճուրդը կկայանա 2023 թվականի **հոկտեմբերի 31**-ին ժամը 11.00-ին, համայնքապետարանի 2-րդ հարկի նիստերի դահլիճում՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 հասցեում: Հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդից 3 աշխատանքային օր առաջ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման մրցութային հանձնաժողովը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման բաց մրցույթ

Լոտ N 1- գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու (որպես արոտավայր) համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք գյուղ Գնդեվազ, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0214-0119, մակերեսը՝ 0,12914 հա, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 25 տարի, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 20 000 (քսան հազար) դրամ:

Լոտ N 2- գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու (որպես արոտավայր) համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք գյուղ Գնդեվազ, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0201-0132, մակերեսը՝ 2,61655 հա, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 25 տարի, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 80 000 (ութսուն հազար) դրամ:

Լոտ N 3- գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու (որպես արոտավայր) համար, հասցեն՝ Ջերմուկ համայնք գյուղ Գնդեվազ, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0201-0133, մակերեսը՝ 1,52896 հա, վարձակալության տրամադրման ժամկետը՝ 25 տարի, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 40 000 (քառասուն հազար) դրամ

Նշված հողամասերում չկան ճանապարհներ, ջրատար, գազատար, կոյուղու խողովակաշարեր և էլեկտրահաղորդման գծեր, սերվիտուտներ: Հողամասերի հողակադաստրային շրջանը՝ Վեդի Ներքին-Արփա, հողատեսքի գնահատման խումբը՝ 5: Վարձակալողը պարտավոր է հողամասում իրականացնել բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ և ապահովել ագրոտեխնիկական պահանջները:

Մրցույթի մասնակցության վճարը 10 000 դրամ է, որն անկախ մրցույթի արդյունքներից՝ ետ չի վերադարձվում: Նախավճարի չափը՝ մեկնարկային վճարի 5%-ը, որը մրցույթի մասնակիցները մուծում են մրցույթի անցկացման օրը՝ մինչև մրցույթի մեկնարկը: Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել մասնակցության հայտ՝ կցելով անձնագրի պատճեն (եթե ֆիզիկական անձ է) կամ հիմնադիր փաստաթղթերը (եթե ընկերություն է) և մասնակցության վճարի անդորագիրը: Հայտերի ընդունումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Մրցույթում հաղթող կճանաչվի այն մասնակիցը, ով կառաջարկի առավելագույն վարձավճար և հողամասի արդյունավետ օգտագործման լավագույն պայմաններ: Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը: Մրցույթում հաղթած անձն արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը և զրկվում է մրցույթը չկայանալու պարագայում հողամասն առանց մրցույթի վարձակալելու իրավունքից: Վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագրի և հողամասի հատակագծի նախագծերին կարելի է ծանոթանալ տեղում, այլ պայմանների ծանոթանալու համար կարելի է զանգահարել 028721217 կամ 060747077 հեռախոսահամարներով:

Մրցույթը կկայանա ս/թ հոկտեմբերի 31-ին, ժամը 15.00-ին, Ջերմուկի համայնքապետարանում՝ ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 հասցեում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հոկտեմբերի 2023թ. N 301-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 289-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի սեպտեմբերի 4-ի «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը տվյալ շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցելու մասին» N 289-Ա որոշման մեջ կատարել լրացում՝ ավելացնել նոր՝ 3-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3. Ընդունել ի գիտություն, որ՝

ա/ Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 7-րդ փողոցի 1-ին շենքի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասը, որն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցվում է տվյալ շենքերի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին, կազմում է 0,0448 հա»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 2
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հոկտեմբերի 2023 թ. N 302-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ՝ Մ-2 ՃԱՆԱՊԱՐՀԻՆ (ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ) ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔԸ ԲԱՐԵԿԱՐԳԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ և 22-րդ ենթակետերով, հիմք ընդունելով Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Ս. Մկրտչյանի՝ ս/թ հոկտեմբերի 2-ի զեկուցագիրը (մտից N 1673)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական տարածքի՝ Մ-2 միջպետական ճանապարհի (Երևանյան խճուղի) հարակից տարածքը բարեկարգելու և սանիտարական մաքրման նպատակով իրականացնել չորացած ծառերի (ուռենիների) հատում:

2. Սույն որոշման կատարումը վերապահել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ–ին՝ նշված աշխատանքների կատարման հսկողությունը դնելով Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանի վրա:

3. «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրենին՝ հատման աշխատանքների ժամանակ անհրաժեշտ վառելանյութը և աշխատանքային գործիքները տրամադրել ՀՈԱԿ-ի միջոցներից, տարածքների մաքրումը կատարել ՀՈԱԿ-ի կողմից՝ համայնքի միջոցների հաշվին, առաջացած փայտանյութը տրամադրել վարչական ղեկավարի գրասենյակին՝ գյուղի անապահով բնակիչներին, որպես վառելանյութ, բաշխելու նպատակով:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանին և «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Ա. Սիմոնյանին:

5.Սույն որոշման պատճեն ուղարկել ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Վայոց ձորի տարածքային բաժնի:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 3
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հոկտեմբերի 2023թ. N 303-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,70093 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,70093 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ վարելահող, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023JWT93Y:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 4
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հոկտեմբերի 2023 թ. N 304-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,24007 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,24007 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ վարելահող, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023MZBB5P:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 4
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հոկտեմբերի 2023 թ. N 305-Ա

### ՀԱՅԿՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման 2-րդ կետի, և հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Հայկուհի Արշակի Առաքելյանի դիմումը (մտից՝ 2023 թվականի հոկտեմբերի 4-ի N 1691)՝ ***որոշում եմ՝***

1. Ձևակերպել կառուցապատող Հայկուհի Արշակի Առաքելյանի կողմից իրականացված Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 13/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության կառույցի շահագործման թույլտվությունը:
2. Հայկուհի Արշակի Առաքելյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031385 հաշվեհամարին մուծել 20 000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շինարարության ավարտը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին Հայկուհի Արշակի Առաքելյանին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 4
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հոկտեմբերի 2023թ. N 306-Ա

### ՌԱՖԱՅԵԼ ԵՐԱՆՈՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, հաշվի առնելով Ռաֆայել Հուսիկի Երանոսյանի դիմումը (մտից 1708, 09.10.2023 թ.)՝ ***որոշում եմ***՝

1. Կողմերի համաձայնությամբ, վաղաժամկետ՝ ս/թ հոկտեմբերի 10-ից, լուծել Ջերմուկ համայնքի և Ռաֆայել Հուսիկի Երանոսյանի միջև 2023 թվականի մայիսի 31-ին կնքված Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող 1,31 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ հողամասի (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0293-0006) վարձակալության պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2023 թ. N 307-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱԼԵՆ ԵՎ ԱՐԳԻՇՏԻ ՎԱՀԵԻ ՄԱՐԳԱՐՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ԱՊՐԵՍԻ ՏՈՆԵՅԱՆԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 12-ի N 5 արձանագրության, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Լուսինե Ապրեսի Տոնեյանի, ինչպես նաև Մարիամ Մեհրաբի Մարգարյանի և Ալեն Վահեի Մարգարյանի դիմումները (մտից՝ 2023 թվականի հոկտեմբերի 11-ի N 1724, հոկտեմբերի 13-ի N 1744)՝ ***որոշում եմ՝***

1. Հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի եզրակացությունը՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի անչափահաս բնակիներ Ալեն (ծնված 2007 թ. հունվարի 23-ին) և Արգիշտի (ծնված՝ 2008 թ. նոյեմբերի 15-ին) Վահեի Մարգարյանների նկատմամբ սահմանված հոգաբարձությունը դադարեցնել և հոգաբարձու Լուսինե Ապրեսի Տոնեյանին ազատել հոգաբարձուի պարտականությունների կատարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Ապրեսի Տոնեյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 12
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2023թ. N 308-Ա

### ԱՆԱՀԻՏ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Անահիտ Վազգենի Պողոսյանի դիմումը (մտից՝ N 1609, 18.09.2023 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 23/1-ին շենքում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ-23ա շենքի թիվ 10 բնակարան, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

*Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մ. Սրբեփանյան փողոց 23/1-ին շենք N 10:*

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 16
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2023թ. N 309-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Տիգրան Գագիկի Մանուկյանի դիմումը (մտից՝ 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1701)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 43,1 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 43,1 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 36,34 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023QGBWEH:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

*Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս N 12/6*:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Տիգրան Գագիկի Մանուկյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 16
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հոկտեմբերի 2023 թ. N 310-Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների պուրակում հենարանի կառուցման և հեռուստացույցի տեղադրման աշխատանքների կատարման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին տալ նախագծման թույլտվություն:

2.«ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 16
Ջերմուկ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
# ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հոկտեմբերի 2023 թ. N 311-Ա

### ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ 6-ՐԴ ՓԱԿՈՒՂՈՒ N 7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 17-րդ և 18-րդ կետերին համապատասխան՝ հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Հ. Ե. Աբգարյանի դիմումը (մտից N 155, 26.01.2021 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Հենրիկ Երջանիկի Աբգարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2014 թվականի հունվարի 24-ի N 24012014-10-0004 վկայական) Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի 6-րդ փակուղու N 7 հասցեում գտնվող 600 քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 94,06 քմ ընդհանուր մակերեսով բնակելի նշանակության շինությունը՝ կիսակառույց բնակելի տունը (այսուհետ՝ շինություն) համարել օրինական (ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023PLBQXC):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նվազ շինությունը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների պահպանմամբ, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության օրինականացման համար հողամասի սեփականատերը պարտավոր է սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Ջերմուկի համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին մուծել 103500 (հարյուր հերեք հազար հինգ հարյուր) դրամ, հակառակ դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն

որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի «ե» ենթակետին համապատասխան սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հենրիկ Երջանիկի Աբգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հոկտեմբերի 17
Ջերմուկ